ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/04» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2021 թվականի հունիսի 21-ին կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/04-1» պայմանագրում 2021 թվականի օգոստոսի 10-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 և 8.13 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
21.06.2021թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/04-1» ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 10 » օգոստոսի 2021թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պաշտոնակատար Խ. Ղազարյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱԼ ԵՎ ԱՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 21.06.2021թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/04-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Դատական դեպարտամենտ	***«ԱԼ ԵՎ ԱՐ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Նուբարաշեն 20փ., 20/1, բն.6
Հ/Հ՝ 900011025757	Հ/Հ՝ 163548008941
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 00471629
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «Նուբարաշեն» մ/ճ
Ղեկավարի պաշտոնակատար՝ Խ. Ղազարյան	Տնօրեն՝ Ա. Գրիգորյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 10 » օգոստոսի 2021թ. կնքված N 1 համաձայնագրի

Հավելված N 3
« 21 » հունիսի 2021թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/04-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում.					
			օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100/514	Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի էջմիածնի նստավայրի վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ/	2 035 902	2 035 902	2 035 902	2 035 902	2 035 902	**2 035 902**

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
Հ/Հ՝ 900011025757
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պաշտոնակատար՝ Խ. Ղազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱԼ ԵՎ ԱՐ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Նուբարաշեն 20փ., 20/1, բն.6
Հ/Հ՝ 163548008941
ՀՎՀՀ՝ 00471629
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «Նուբարաշեն» մ/ճ

Տնօրեն՝ Ա. Գրիգորյան

/ստորագրություն/
Կ.Տ